

Թիւնը և բաւականանալ սովորական գներով: Ապա թէ ոչ հասարակութեան այժմեան գանգատը կարող է փոխուել մի օր խիստ բողբոջի և մենք մի օր ականատես կը լինենք թատրոնի ամայութեանը բնեֆիսի օրերին, ինչպէս այս տեսանք օր. Ադամեանի բնեֆիսին:

* *

ԳԻՏԱԿԱՆ ԾՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ՆՈՐ ՏԵՍՈՒԹԻՒՆ ՈՐՈՏԻ ԾԱԳՄԱՆ ՄԱՍԻՆ: Գիտութիւնը առաջ է գնում արագ քայլերով, քսաներորդ դարը իսկապէս գիտութեան յաղթանակի դար պէտք էր համարել. իւրաքանչիւր օր բերում է իւր հետ մի նոր տօբիա, որով հիմնովին շրջւում է հինը. բայց խօսենք օրուայ նորութիւնների մասին: Որոտ առաջացնող պատճառները այնքան էլ հասարակ չեն, ինչպէս կարծում են առհասարակ: Մինչև այժմ կարծում էին, որ որոտը օդային գոյացութիւնների էլքերական կայծի պայթիւնից առաջ եկած ձայնի ալիքներն է: Բայց պր. Տրուբբիշի անագին փորձերը ուրիշ բան են ապացուցանում: Տրուբբիշի փորձերի հետևանքներից երևում է, որ կայծակին հետևող որոտը առաջ է գալիս ջրային գոլորշիների վերլուծութիւնից: Գիտնական պրօֆեսօրը երկար տարիների ընթացքում պարապում էր ջրային գոլորշու լուսապատկերով: Մի շարք փորձերից յետոյ, նա վճռեց հետազօտել խիստ էլքերականութիւնը մեծ քանակութեամբ ջրային գոլորշի պարունակող մթնոլորդի մէջ անցկացնելուց ստացուած լուսապատկերը: Սկզբում նա յոյս ունէր հետազօտել ջրի գոլորշու լուսապատկերը էլքերական կայծը անցկացնելով ջրի մէկ մակերևոյթից դէպի միւսը. բայց այդ չը յաջողուեց: Այն ժամանակ Տրուբբիշը հետևեալ միջոցը հնարեց: Նա վերցրեց երկու փայտի կտոր, թաց արեց մաքուր ջրի մէջ և փաթաթեց ջրի մէջ թրջած բամբակով: Այնուհետև այդ փայտերը ամրացրեց մարտկոցի բեռներին և էլքերականութիւն անցկացրեց դորանց մէջ: Այդ գործողութեան ժամանակ առաջացան մի շարք շատ պայծառ կայծեր, ետևից էլ այնպիսի խիստ ճայթիւն, որ ինքը Տրուբբիշը կարողացաւ տանել ականջների մէջ բամբակ կոխելով և գլուխը հաստ թաշկինակով փաթաթելով:

Ճայթիւնի առաջանալը Տրուբբիշը բացատրում է թրթուածնի և ջրածնի միանալով, որոնք ստացւում են էլքերականութեամբ ջրի վերլուծութիւնից:

Այդ ենթադրութեամբ որոտի ոյժը կախուած է խոնաւութիւնից:

Արուեստական կայծակի լուսապատկերը բոլորովին համապատասխան է իսկական պատկերի լուսապատկերին, եթէ վերջինս դիտենք $1\frac{1}{2}$ հեռաւորութիւնից նա էլ առաջանում է ամպերի մէջ:

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՕՂԵՐԵՒՈՒԹԱՐԱՆՈՒԹԻՒՆ: Եղանակ գուշակելու արուեստի մէջ մեր գիւղացիները թէ յետ չեն մնում զանազան գիտնական օղերու թաբաններէց, այլ երբեմն նոյն իսկ գերազանցում են նրանց:

Գիւղացիներն համոզուած են, որ եթէ արևը մայր մտնելիս կարմիր վերջալոյս է թողնում երկնքի վրայ, միւս օրը պէտք է պարզ և արևալին օր լինի, իսկ եթէ արևը մայր է մտնում մառախուղի մէջ կամ ծածկուած է ամպերով, միւս օրը անձրև կամ փոթորիկ է լինելու և այդ երևոյթները շատ քիչ են խարուած նրանց:

Հասակաւոր և փորձուած մարդիկ, գուշակելիս ուշադրութիւն են դարձնում նոյն իսկ ընութեան ամենամանջան երևոյթների վրայ: Օրինակ. արև ծագելուց առաջ բաց գոյնի ամպը լաւ օր է խոստանում, մուգը—ամպամած կամ անձրևային: Կարմիր կամ փոփոխական գոյն ունեցող ամպերը անձրև են նախագուշակում. եթէ այդ ժամանակ քամի է բարձրանում, փոթորիկ կամ սաստիկ քամի կլինի, իսկ եթէ արևի ճառագայթներն էլ են մթնում, այն ժամանակ խիստ մրրիկ է լինելու:

Գիւղական օղերու թաբանները գուշակում են նաև լուսնի, աստղերի և ուրիշ երևոյթների միջոցով:

Եթէ լուսինը ծնւում է սուր ծայրը ներքև՝ ձմեռը տաք, իսկ ամառը շատ տաք ամիս կլինի և ընդհակառակ, եթէ լուսինը ծնւում է ծայրը վերևից, ամսուայ առաջին կէսը եթէ ձմեռ է՝ սառը կլինի, իսկ ամառը՝ քամոտ: Լուսնի պայծառ և սուր ծայրերը լաւ եղանակ են գուշակում: Պարզ լուսինը նշանակում է չոր եղանակ, ամպով ծածկուածը՝ խոնաւ, կապտագոյնը՝ անձրև, կարմրագոյնը՝ քամի:

Բարձր և կամարածէ ծիածանը միշտ լաւ եղանակին է լինում, իսկ ցածր և փոքր ինչ թէքը վատ՝ եղանակին: Եթէ ծուխը սիւնի պէս է բարձրանում, ամառը լաւ եղանակ կլինի, իսկ ձմեռը սառնամանիք, իսկ եթէ առանց քամու տարածւում է գետնի երեսին՝ ամառը անձրև և ձմեռը ձիւն կամ բուք:

Պակաս տարածուած չէ նաև տնային կենդանիներով և թռչուններով եղանակ գուշակելը: Շունը վատ եղանակին զբոլորում է գետնին, իսկ անձրևից առաջ խոտ է ուտում. վատ եղանակին կատուն պատեր է չանգում. երբ կատուն լուացւում է կամ թաթն է լիզում՝ լաւ եղանակ է լինելու: Սառնամանիքի և առհասարակ վատ եղանակից առաջ կատուն դուռը թաթերի մէջ է պահում:

Վատ եղանակին տաւարը աշխատում է երդիկի տակ պարկել: Ձին վատ եղանակին խրխնջում է: Եթէ ծիծեռնակները ցածր են թռչում՝ անձրև պէտք է սպասել, իսկ եթէ բարձր՝ լաւ եղանակ է լինելու և այլն:

Կլիմայի համեմատ յիշեալ երևոյթները փոխում են և երբեմն շատ խիստ կերպով զանազանում միմեանցից:

ՕՐ. ՆՈՒԱՐԴ ԱՂԱՆԵԱՆ